



Հայաստանի կենսաբ. հանդես, 4 (73), 2021

ԴԱՇՏԱՄԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄԸ ԱՇՈՑԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա.Ա. ՄԱՆԿԵԼՅԱՆ, Ա.Վ. ԲԵՇԻՇՕՂԵԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
armjes77@mail.ru, artyom07727@mail.ru

Հոդվածում ներկայացված են 2018-2019թթ. Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի 11 գյուղերում (Աշոցք, Թավշուտ, Բավրա, Սարագյուղ, Սիզավետ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Չուլգաղբյուր, Կրասար, Կարմրավան) դաշտամկների տարածվածության վերաբերյալ իրականացված հետազոտությունները և դրանց արդյունքները:

Ըստ հետազոտությունների՝ 2018 թվականին դաշտամկների տարածվածության բարձր աստիճան գրանցվել է Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար և Կրասար գյուղերում, իսկ մնացած գյուղերում՝ ցածր կամ միջին: Իսկ 2019 թվականին 11 գյուղերում գրանցվել է տարածվածության բարձր աստիճան: Ստացված տվյալներից իրականացվել է դաշտամկների տարածվածության քարտեզագրում:

Դաշտամկ – տարածվածություն – քարտեզագրում – քանցք – հացահատիկ

В статье представлены исследования и результаты распространенности полёвок за 2018 – 2019 г.г. в 11 деревнях Ширакской области Ашотского региона (Ашотск, Тавшут, Бавра, Сарагюх, Мизавет, Хазанчи, Мец Сепасар, Фокр Сепасар, Зуйгахбюр, Красар, Кармираван).

Согласно исследованиям 2018 года, была зарегистрирована высокая степень распространенности полёвок в деревнях Мец Сепасар, Фокр Сепасар, Красар, а в остальных деревнях распространенность в низкой или средней степени. А 2019 году в 11 деревнях была зарегистрирована высокая степень распространенности полёвок. В результате полученных данных в Ашотском регионе была выполнена картография распространенности полёвок.

Полёвки – распространенность – картография – среда обитания – зерно

The article presents Surveys of 2018-2019 on the prevalence of *Arvicolinae* in 11 villages of Ashotsk of Shirak region (Ashotsk, Tavshut, Bavra, Saragyugh, Sizavet, Ghazanchi, Mets Sepasar, Pokr Sepasar, Zuygaghbyur, Krasar, Karmravan) and their results.

According to research conducted in 2018, the highest degree of prevalence of *Arvicolinae* was registered in the villages of Mets Sepasar, Pokr Sepasar և Krasar, and in other villages the degree was low or medium. And in 2019 the highest rate of spreading was recorded in 11 villages. According to the recorded data napping of spreadind of *Arvicolinea* was conducted.

Arvicolinae – prevalence – mapping – habitat – grain

Շիրակի մարզը դարեր ի վեր դիտվել է որպես «հացի շտեմարան», շնորհիվ այն հանգամանքի, որ մարզում գործում է Գյումրու «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ն, որը՝ որպես գիտաարտադրական ձեռնարկություն, մեծ ներդրում է ունեցել և ունի մարզին և հանրապետությանը գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի բարձրորակ սերմերով ապահովելու գործում:

Աշոցքի տարածաշրջանի մշակաբույսերի ընդհանուր տարածքների մոտ 90 %-ը կազմում են հացաբույսերը: Շիրակի մարզում հացազգիները մշակվում են 18458 հա տարածության վրա [3]:

Աշոցքում հացահատիկային մշակաբույսերի ընդհանուր տարածքները կազմում են 1293 հա, որից աշնանացան ցորեն՝ 216 հա, գարնանացան գարի՝ 163,3 հա, վարսակ՝ 774,9 հա՝ ըստ 2018թ. վիճակագրական տվյալների [3]:

Վերջին տարիներին Աշոցքի տարածաշրջանում հացազգի մշակաբույսերի բերքատվության և բերքի որակի իջեցման պատճառ են հանդիսացել մկնանման կրծողները, որոնց պոպուլյացիայի աճը հիմնականում պայմանավորված էր տարիների բարենպաստ բնակլիմայական պայմաններով և պայթարի միջոցառումների բացակայությամբ:

Աշոցքի տարածաշրջանում դաշտամկների տարածվածության վերաբերյալ ուսումնասիրություններ չեն կատարվել, որից ելնելով էլ ցանքատարածություններում պայթարի միջոցառումներ չեն իրականացվել:

Դաշտամուկը (*Arvicolinae* կամ *Microtinae*) [4] հացահատիկային մշակաբույսերի գլխավոր վնասատուներից մեկն է: Վնասում են նաև բանջարաբուստանային մշակաբույսերը, անտառտնտեսություններում ոչնչացնում են արժեքավոր ծառատեսակների սերմերը, կրծում երիտասարդ ծառերի կեղևները: Պահեստներում աղտոտում և ոչնչացնում են գյուղատնտեսական ապրանքները [5]:

Նրանք ակտիվ են ամբողջ տարվա ընթացքում և ծմռանը քուն չեն մտնում: Օրական սպառում են այնքան սնունդ, որքան կազմում է մարմնի քաշը: Ունեն բազմացման բարձր ինտենսիվություն [1]: Նրանք պատրաստում են մոտ 3 սմ տրամագծով բնանցքեր (որոնք միմյանց հետ կապված են մակերեսային բազմաթիվ ուղիներով) և ապրում են խմբերով (գաղութներով):

Ներկայումս մկնանման կրծողների տարածվածությունը, բնակական աճը, դրանց հասցրած վնասակարության աստիճանը խնդիր է, որը պահանջում է որոշումներ և լուծումներ:


Նյութը և մեթոդները: Հետազոտություններն իրականացվել են 2018-2019թթ. ընթացքում Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի 11 գյուղերում՝ Աշոցք, Թավշուտ, Բավրա, Սարագյուղ, Սիզավետ, Դազանի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Չուգաղբյուր, Կրասար, Կարմրավան: Ուսումնասիրվել է համայնքում դաշտամկների տարածվածությունը բնանցքերի հաշվառման մեթոդով:

Դաշտամկների հիմնական բնակավայրերն են բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունները, աշնանացան հացաբույսերի ցանքերը, չմշակվող հողատարածքները, արոտավայրերը և այլն: Քանի որ դաշտամկները փոխում են իրենց արեալը (բնակավայրերը) և հայտնվում իրենց համար նոր իրավիճակներում, ապա շատ կարևոր էր իրականացնել դաշտամկների տարածվածության ցուցանիշների մի քանի տարվա ուսումնասիրություն: Տարածաշրջանի 11 գյուղերում դաշտամկների տարածվածության որոշման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման աշխատանքները կատարել ենք 2018 և 2019 թվականների գարնանը: Այդ և այլ տվյալների հավաքագրումը հնարավորություն տվեց բացահայտելու համայնքում դաշտամկների տարածվածությունը (բնակեցվածությունը), վնասակարությունը, բարոտեզագրելու տարածվածության աստիճանը, ինչպես նաև կանխատեսելու գալիք վեգետացիոն շրջանում բնակեցվածության աստիճանը և հնարավորինս շուտ սկսելու պայթարի միջոցառումները: Դաշտամկների տարածվածությունը որոշվում է 1 հա-ի վրա գաղութների ու բների հաշվառման եղանակով:

Դաշտամկների տարածվածությունը որոշել ենք՝ օգտվելով բնանցքերի հաշվառման մեթոդից [6]: Միջին տարածվածության աստիճանը որոշել ենք հետևյալ սանդղակի միջոցով.

- ցածր – 50-ից պակաս գործող բների առկայության դեպքում
- միջին – 50-100 գործող բների առկայության դեպքում
- բարձր – 100-ից ավել գործող բների առկայության դեպքում

Ըստ բնանցքերի հաշվառման մեթոդի՝ դաշտամկների տարածվածությունը գնահատելու ամենահեշտ եղանակը «նշանները կարդալն է»։ Յուրաքանչյուր գյուղից մոտ 1-2 կմ հեռավորության վրա ընտրել ենք 2 դաշտ՝ վարելահող և խոտհարք՝ 1 հա մակերեսով, որոնք միմյանցից գտնվում էին առնվազն 1-2 կմ հեռավորության վրա։ Այնուհետև յուրաքանչյուր դաշտից անկյունագծային եղանակով ընտրել ենք 4 տարածք՝ 6 մ x 6 մ մակերեսով։ Հաշվել ենք չորս տարածքների բնանցքերը և ցուցանիշները, ապա փակել բնանցքերը։ Հաջորդ օրը հաշվել ենք բացված բնանցքերը և կատարել համապատասխան նշումները (նկ. 1), [2]։



Նկ.1. Դաշտում իրականացված բնանցքերի հաշվառման արդյունքը*

Ա. Նախքան փակելը առկա բնանցքեր; Բ. Փակ բնանցքեր;

Գ. Գործող բնանցքեր

* Նկարները կատարվել են հեղինակների կողմից

Արդյունքներ և քննարկում: Դաշտամկների տարածվածության տվյալների հավաքագրումը կատարել ենք՝ սկսած 2018 թվականի գարնանից։ Այդ և այլ տվյալների հավաքագրումը հնարավորություն տվեց բացահայտելու համայնքում դաշտամկների տարածվածությունը (բնակեցվածությունը), վնասակարությունը, քարտեզագրելու տարածվածության աստիճանը, ինչպես նաև կանխատեսելու գալիք վեգետացիոն շրջանում բնակեցվածության աստիճանը և հնարավորինս շուտ սկսելու պայթյալի միջոցառումները։

Տարածաշրջանի 11 գյուղերում դաշտամկների տարածվածության (բնակեցվածության) որոշման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման աշխատանքները կատարել ենք 2018 և 2019 թվականների գարնանը։

2018-2019 թվականներին հաշվառումների արդյունքում ստացված տվյալները ներկայացված են աղ. 1-ում։

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, տարածաշրջանի 4 գյուղերում (համեմատած մնացած գյուղերի հետ)՝ Թավշուտ, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, հաշվառման արդյունքում գործող բնանցքերի բավականին բարձր ցուցանիշներ են գրանցվել. 2018-ին համապատասխանաբար՝ 4; 7; 8; 6, իսկ 2019-ին՝ 36; 32; 31; 37։ Փորձերի արդյունքում ստացված ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է նրանով, որ այդ գյուղերի դաշտերը գտնվում են գետին մոտ (նկ. 2)։ Զանի որ դաշտամկների համար լավագույն պայման է համարվում խոնավությունը՝ հատկապես չորային տարիներին, հետևաբար՝ դրանց բնակեցվածությունն ավելի շատ է գրանցվել հենց այդ տարածքներում։

Որոշել ենք նաև դաշտամկների տարածվածության աստիճանը՝ յուրաքանչյուր գյուղի վարելահողերի և խոտհարքների համար։ Ստացված տվյալներն ամփոփված են աղ.2-ում։

Աղ.2-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2018 թվականին դաշտամկների տարածվածության բարձր աստիճան գրանցվել է Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար և Կրասար գյուղերում, որը հավանաբար պայմանավորված է եղել նրանով, որ այդ գյուղերի հողատարածքները գտնվել են անտառին մոտ, ինչը չեն կարող ասել մյուս գյուղերի համար, որոնց մոտ գրանցվել են միջին կամ ցածր ցուցանիշներ։ Իսկ 2019 թվականին տարածաշրջանի 11 գյուղերում տարածվածության բարձր աստիճան ենք գրանցել։ Շարունակելով նայել 2019 թվականի տվյալները՝ կարելի է պատկերացում

կազմել դաշտամկների առեղի քանակի և միջև վեգետացիայի ավարտը հասցված վնասի մասին:

		Աղյուսակ 1											
		Հետազոտված հողակտորներում բնանցքերի քանակը ըստ հողատեսքերի և տարիների*											
		2018						2019					
		Վարելահող		Խտտարք		Կարելահող		Կարելահող		Խտտարք		2018	
Հ/Հ	Գյուղ	Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող
		0	0	18	4	1	1	80	35	18	4	81	36
1	Թավշուտ												
2	Մեծ Սեպասար	1	1	20	6	1	1	92	31	21	7	93	32
3	Փոքր Սեպասար	4	1	18	7	4	2	81	29	22	8	85	31
4	Կրասար	1	1	12	5	0	0	96	37	13	6	96	37
5	Կարմիրական	0	0	8	2	1	1	38	13	8	2	39	14
6	Ջուլգարյուր	1	1	10	3	2	1	42	12	11	4	44	13
7	Աշոց	0	0	12	2	8	5	46	17	12	2	54	22
8	Ղազանչի	3	1	11	4	0	0	59	24	14	5	59	24
9	Սիգակետ	1	1	16	3	1	1	47	16	17	4	48	17
10	Բակրա	0	0	13	4	2	2	38	11	13	4	40	13
11	Սարագյուղ	0	0	9	2	0	0	32	7	9	2	32	7
ԸՆԴԱՄԵՆՆԵՐ		11	6	147	42	20	14	651	232	158	48	671	246

* աղյուսակը կազմված է հեղինակների կողմից



Նկ. 2. Դաշտամկների տարածվածությունը գետի հարակից դաշտերում*
* Նկարները կատարվել են հեղինակների կողմից

Աղյուսակ 2. Աշոցքի տարածաշրջանի դաշտամկների տարածվածությունը

Հ/Հ	Գյուղը	Բնանցքերի միջին քանակը 1 հա հաշվով				Տարածվածության աստիճանը (ցածր, միջին, բարձր)	
		2018		2019			
		Ընդամենը	Գործող	Ընդամենը	Գործող	2018	2019
1	Թավշուտ	313	69	1406	625	միջին	բարձր
2	Մեծ Սեպասար	365	122	1614	556	բարձր	բարձր
3	Փոքր Սեպասար	382	139	1476	538	բարձր	բարձր
4	Կրասար	226	104	1667	642	բարձր	բարձր
5	Կարմրավան	139	35	677	243	ցածր	բարձր
6	Չուլգաղբյուր	191	69	764	226	միջին	բարձր
7	Աշոցք	208	35	938	382	ցածր	բարձր
8	Ղազանչի	243	87	1024	417	միջին	բարձր
9	Սիզավետ	295	70	833	295	միջին	բարձր
10	Բավրա	226	70	694	226	միջին	բարձր
11	Սարագյուղ	156	35	556	330	ցածր	բարձր

* Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից

2018-2019 թթ.-ին Աշոցքի տարածաշրջանի 11 գյուղերում դաշտամկների տարածվածության վերաբերյալ կատարված հետազոտությունների և դրանց արդյունքում ստացված տվյալների հավաքագրման հիման վրա բարտեզագրել ենք Աշոցքի տարածաշրջանում դաշտամկների տարածվածությունը (Նկ. 3), որը ներկայացված է հետևյալ պայմանական նշաններով:

Վերջին տարիներին Աշոցքի տարածաշրջանում հացազգի մշակաբույսերի բերքատվության և բերքի որակի իջեցման պատճառ են հանդիսացել դաշտամկները, որոնց պոպուլյացիայի աճը հիմնականում պայմանավորված էր տարիների բարենպաստ բնակլիմայական պայմաններով և պայթարի միջոցառումների բացակայությամբ:

2018 թվականին կատարած հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ դաշտամկների տարածվածության բարձր աստիճան գրանցվել է Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար և Կրասար գյուղերում, իսկ մնացած գյուղերում՝ ցածր կամ միջին: Իսկ 2019 թվականին 11 գյուղերում գրանցվել է տարածվածության բարձր աստիճան: Սակայն 2019 թվականին գրանցվել է դաշտամկների ահռելի քանակություն, որոնց հասցրած վնասը հսկայական էր: Երկու տարվա հետազոտությունների արդյունքում նկատվեց, որ ավելի շատ գործող բնանցքեր գրանցվել են Թավշուտ, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար և Կրասար գյուղերի դաշտերում:

3. https://www.armstat.am/file/article29_gt2018.pdf
4. <https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%BE%D0%BB%D1%91%D0%B2%D0%BA%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5>
<http://www.stgau.ru/>
5. <https://animaldiversity.org/accounts/Arvicolinae/#967667b0a2158323a6ca6e78b0480fe6>
6. <https://www.activestudy.info/metody-ucheta-pozvonochnyx-v-posevax/>

Ստացվել է 06.10.2021